ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 19 >> հուլիսի 2016 թվականի N: 300-Ա **ք.Գյումրի**

ԱՂԵՏԻ ԳՈՏՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԿՈՇՏՈՅԱՆ ՓՈՂՈՑԻ 5/1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 28 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՑՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 5/1 (նախկին 5ա) շենքի՝ որպես պետական սեփականություն, անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2006 թվականի հունիսի 14-ի թիվ 1952545 վկայականը, հաշվի առնելով Գյումրու քաղաքապետի 2003 թվականի փետրվարի 3-ի թիվ 72 որոշումը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի N1935-Ն որոշման 1-ին կետի <<բ>> ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 22-ի N116 որոշման 2-րդ կետի դրույթներով՝ աղետի գոտու վերականգնման ծրագրի շրջանակներում պետական աջակցության միջոցով ամրացված և Գյումրու քաղաքապետի կողմից հատկացված Գյումրի քաղաքի Կոշտոյան փողոցի 5/1 շենքի թիվ 28 չորս սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ՝

Խաչատրյան Անուշ Ներսեսի,

Գրիգորյան Հարություն Ֆրանցիկի,

Գրիգորյան Կարինե Վալիկոյի,

Գրիգորյան Ֆրանց Հարությունի,

Գրիգորյան Աննա Հարությունի:

Հ.ՍԻՄՈՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է